«Քայլ առ քայլ բարեգործական հիմնադրամ»

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Սաների հայրենաճանաչության ձևավորման կարևորությունը»

Դաստիարակ՝ Լուսինե Խաչյան

Մանկապարտեզ՝ Հալիձորի ՆՈՒՀ ՀՈԱԿ

2023

Բովանդակություն

Ներածություն ……3

Գլուխ 1. Հայրենաճանաչությանը, որպես հայրենասիրական դաստիարակության անբաժանելի մաս……5

1.2 Ընտանիքը, որպես հայրենաճանաչության հիմնաքար……9

Եզրակացություն……13

Օգտագործված գրականություն……14

Ներածություն

Բոլոր ժամանակներում կարևոր և խնդրահարույց թեմաներից մեկը՝ դա «Սաների հայրենաճանաչության ձևավորման կարևորությունը» թեման է, որովհետև հայրենիքը մի տարածք է, որտեղ ժողովուրդը ապրում է կերտելով իր պատմությունը, կենցաղը, վարք ու բարքը: Ունենալով իր պետական կառուցվածքը սերունդներին է ժառանգում իր քաղաքակրթության արժեքները: Բոլորն էլ ունեն իրենց հայրենիքը՝ դա այն տարածքն է, որտեղ ապրել ու արարել են իրենց նախնիները: Ցանկացած ազգի գոյությունը պահպանելու համար հիմնականում հենվում ենք և ամուր զենք ենք դարձնում դաստիարակությունը և կրթությունը, որի գլխավոր խնդիրն է ունենալ համակողմանի և ներդաշնակ զարգացած, արժեքային համակարգով դաստիարակված ապագա քաղաքացի: Դրա համար անհրաժեշտ է երեխայի՝ անհատի, մեջ ձևավորել հայրենաճանաչողություն և հայրենասիրությունը: Ճանաչելով հայրենիքը, երեխան կսիրի և կարժևորի այն: Հայրենասիրությունը ենթադրում է մարդու դրական հատկանիշների համալիր ձևավորում և զարգացում, զուր չէ ազգագրագետ, բանագետ Արուսյակ Սահակյանը գրավոր և բանավոր հիշատակարաններից առանձնահատուկ ոճով շարունակում նոր շունչ տալ պատմական և ներկայիս իրողություններին՝ յուրաքանչյուր թեմա վերածելով հայրենիքի և հայրենասիրության դասի:

Հայրենիքի հետ միշտ հանդես է եկել հայրենասիրությունը, նրանք անբաժանելի են ու միասնական, գիտակցող անձի հոգևոր արժեքներով, սոցիալական ակտիվության հետ միասին: Էությամբ այն միասնական է, բայց բազմաբնույթ իր դրսևորումներում, սակայն մինչև այսօր դեռ չի ձևավորվել միասնական, բոլորի կողմից ընդունելի կարծիք, թե հայրենասիրութուն ասելով ինչ ենք հասկանում:

Թեմայի արդիականությունը նախադպրոցական տարիքի երեխաների մոտ հիմք է հանդիսացել սույն հետազոտության արդիականության համար, հայրենասիրական դաստիարակության անրաժեշտությունը: Կարևորում եմ մարդկային բարձր հատկանիշները, ինչի մասին նշել է Ա. Ղուկասյանը «Հայոց պամություն 6-7

դասարաններում» ուսուցչի ձեռնարկում «Դաստիարակել մարդկային բարոյական այնպիսի որակներ ու արժանիքներ ինչպիսիք են համագործակցությունը, հանդուրժողականությունը, համբերատարությունը, բարությունը։»

Հետազոտության նպատական է ուսումնասիրել հայրենասիրական դաստիարակության ուսուցման ձևերը ավագ, միջին, կրտսեր նախադպրոցական տարիքի երեխաների համար, առաջադրել մանկավարժական արդյունավետ պայմաններ.

- Երեխաներին պատմել պատմամշակույթային վայրերի մասին։
- Հարստացնել երեխաների գիտելիքները ՀՀ-ի վերաբերյալ։
- Ծանոթացնել երեխաներին ՀՀ-ի քարտեզին, օրհներգին, զինանշանին, դրոշին։
- Դաստիարակել սիրո զգացում՝ հայրենասիրություն։

Հետազոտության մեթոդներն են

1. Մասնագիտական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն
2. Զրույց, փորձարարական դասերի վարում
3. Դասալսումներ և այլն։

Ընթացք Աշխատանքը կազմված է ներածությունից, 1 գլխից՝ 2 ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, շարադրված է 14 համակարգչային էջի սահմանում։

Գլուխ 1

1.1 Հայրենաճանաչությանը, որպես հայրենասիրական դաստիարակության անբաժանելի մաս

Հայրենասիրական դաստիրակությունը եղել է ու կա մեր ազգի հիմնական նպատակներից մեկը: Ներկայիս մեր երկրում տիրող քաոսի պատճառով այսօր մեր երիտասարդությունը անտարբեր է դարձել հայրենիքի նկատմամբ: Հայրենասիրական դաստիրակությունը երեխան առաջինը ստանում է ընտանիքում, ինչպես ասել են Յու. Ամիրջանյանն ու Ա. Սահակյանը «Ցանկացած մարդու համար իր երկրի մի թիզ հողից, մի կում ջրից այգուց և ամենակարևորը մայրենի լեզվից է սկսվում հայրենիքը, եթե այս բոլորը մարդն՝ անհատը, ընդունի և հասկանա, ապա հայրենիք հասկացությունը նրա կողմից բարձր կգնահատվի:»[1]

Նախադպրոցական տարիքի երեխաների մեջ հայրենասիրական զգացմունքների դաստիարակումը բարոյական դաստիարակության խնդիրներից է, սերը մանկապարտեզի, հայրենի բնակավայրի, երկրի, տան, ընտանիքի նկատմամբ: Թե՛ նախադպրոցական և թե՛ դպրոցական երեխաները պետք է ճանաչեն մեր հերոսներին, ովքեր անձնվիրաբար կռվել և իրենց կյանք են տվել հանուն հայրենիքի:

Հզոր, ուժեղ, ամուր պետություն ունենալու համար անչափ կարևոր է վաղվա քաղաքացիների ռազմահայրենասիրական ոգով կրթելն ու դաստիրարակելը: Հայրենասիրական դաստիարակությունը կարևոր նշանակություն ունի, լույսի աղբյուրը է, և սաների մեջ արթնացնում է սեր, բարություն, հոգացություն հայրենի հողի հանդեպ, վառ պահելով հայրենասիրական շունչ ու ոգին:

Կարծում եմ, յուրաքանչյուրը պիտի տեր և պաշտպան կանգնի իր մայր հողին: Հայրենասիրությունը մարդուն դարձնում է համարձակ, վճռական, երբ հայրենիքը վտանգված է, պետք է գիտակցել, որ բոլորս էլ պատասխանատվություն ենք կրում այն

[1] Յու Սահակյան, Ա. Ամիրջանյան «Մանկավարժություն» Երևան, 2004, էջ 197

ամեն ինչում ինչ կատարվում է մեր երկրում: Մեր ժողովուրդը իր հազարամյա գոյության ընթացքում ծնել է այնպիսի զավակներ, ովքեր զոհաբերել են իրենց անձը հանուն սերնդոց ու հայրենիքի: Նախնիների սխրանքները դաս ու օրինակ են եղել նոր սերունդների համար: Տեսնելով նրանց սխրանքները, անձնուրացությունը, քաջությունը, պայքարը, նվիրվածությունը սերունդները օրինակ են վերցրել և դարձել են մերօրյա հերոսներ: Հանուն նրանց չապրած կյանքերի, նրանց թափած արյան մենք պարտավոր ենք սստեղծել այնպիսի միջավայր, կառուցենք ու շենացնենք մեր երկիրը, տանք մեր երեխաներին այնպիսի դաստիարակություն, որ նրանց սխրանքը միշտ հիշեն, բարձր պահեն մեր երկրի, մեր ազգի անունն ու պատիվը: Անկախ սեռից, տարիքից, սոցիալական կարգավիճակից, դավանանքից մենք պետք է մեր երկրի ազատությունը, գոյությունը մեր կանքից բարձր դասենք: Մեր հայրենիքը շատ է ծնել նաև կին հերոսներ՝ ազգանվեր, հայրենասեր, օրինակ՝ Սոսեն, Սաթենիկը, Անահիտը (Անահիտ ջոկատի հրամանատարը) և այլն:

Մեզ համար չկա ավելի բարձր ու սրբազան պարտք, քան հայրենիքի պաշտպանությունը «Նրանց ամենքի մեջ Վարդանի մի կայծ կա, Սասնա ծռերի խենթությունը կա»:

Մեր հայրենիքի ամեն մի թիզն արյամբ նվաճված թանգարան է: Դժբախտ է այն մարդը, ով հայրենիք չունի: Մեր հայրենիքի խոսուն վկան մեր նախնիների անվերջ պայքարն է:

Հայի ստեղծագործ մտքի, շինարար ձեռքի խոսուն վկան է մեր գեղեցիկ Երևանը՝ մեր երկնագույն անուրջների մայրաքաղաքը, մեր դարեր շարունակ կանգուն մնացած եկեղեցիներն ու վանքերը, մեր Մատենադարանը՝ հայոց գրերի հավերժության ոստանը:

Հարենասիրություն գաղափարը առանձնահարուկ տեղ է գրավում ոչ միայն հասարակության հոգևոր կյանքում, այլ նաև նրա գործունեության կարևորագույն ոլորտներում՝ քաղաքականության, տնտեսության, գաղափարախոսության,

բնապահպանության մեջ։ Հայրենասիրության ըմբռնման մոտեցումները կարելի է դասել տարբեր ուղղությունների՝ հայրենիքի հանդեպ սիրո մեծ զգացումը, սերը մղված հանուն սեփական հայրենիքի բարօրության, սերը, որպես հասարակական երևույթ, որպես հայրենասիրության օբյեկտ բնութագրվում է պետությունը, որը անվանում ենք «Պետական հայրենասիրություն», բացահայտում է հայրենասիրության էությունը հենց անձի հետ անբաժանելի կապի հետ միասին կամ որպես հայրենասիրության սուբյեկտ, շատ հաճախ դիտարկվում է անձին։

Հայրենասիրությունը ծագում, առաջանում և զարգանում է, որպես զգացմունք, այն արտացոլում է մեր հասարակության պատմական զարգացման յուրահատկությունը։

Հայրենասիրությունը անձի առավել նշանակալից բարոյական արժեքներից է, անհատի կարևորագույն հոգևոր ձեռքբերումը, որը բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և արտահայտվում է ինքնադրսևորման ակտիվ գործունեության՝ ի բարօրություն հայրենիքի։

Իսկ ի՞նչ է հայրենիքը

1. Հայրենիքը, այն երկիրն է, որտեղ մարդը ծնվել է, ու որի քաղաքացին։
2. Այն երկիրը, որ տվյալ ցեղի՝ ժողովրդի բնակավայրն է։
3. Որևէ բանի առաջացման՝ծագման վայրը։[2]

Ուսումնասիրելով մեր երկրի հազարամյա պատմությունը, հասկանում ենք մեր, որ մեր ազգը երբեք չի հանձնվել, որպես փյունիկ վեր է հառել, նոր կյանք ստացել, երբ եղել է թևակոտոր, մենակ ու անպաշտպան։

Հայրենասեր կոչվելու իրավունք ունի միայն մի մարդ, ում մասին կարելի է գրել գրքերում, և որպես օրինակ ներկայացնել մատաղ սերնդին։ Նա երբեք չի խոսում հայրենիքից ու հարենասիրությունից, երբեք լալահառաչ ճառեր չի ասում, միշտ մասնակցում է ընտրություններին և ընտրում է բացառապես խղճի մտոք։ Յուրաքանչյուրս ինչ- որ ձևով պետք է օգտակար լինենք մեր հայրենիքին,

[2] https://bararanonline.com/%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5%D5%B6%D5%AB%D6%84

մեր երկրին, թեկուզ հենց նրանով, որ ապրենք մեր երկրում, զավակներ ծնենք, պահպանենք մեր պատմական, ազգային արժեքները: Կառչենք մեր սեփական հողին: Հարենասիրությունը, ինչպես սիրո ցանկացած տեսակ, պետք է դրսևորվի ոչ թե խոսքով, այլ գործով:

Մի առիթով Մոնթե Մելքոնյանը ասել է «Իմ կենացը մի՛ խմեք, այլ իմ գործը շարունակեք:»

1.2 Ընտանիքը, որպես հայրենաճանաչության հիմնաքար

Հայրենասիրությունը սկսվում է ընտանիքից, հարենասիրական երգերի ուկնդրումը, ազգային հերոսների մասին տեղեկություններ ստանալը, բնության, երկրի, ընտանիքի անդամների նկատմամբ հոգատարությունը, սերը երեխան հենց տնից է առաջինը ստանում: Երեխան պետք է ճանաչի իր ազգի հերոսներին, գնահատի ու արժևորի նրանց սխրանքը, գիտակցի, որ վաղվա հայրենիքի պաշտպանը ինքն է: Յուրաքանչյուրս պետք է ռազմահայրենասիրության ամուր հիմքեր դնենք մատաղ սերունդի մեջ, կրթենք նրանց, որպես իսկական հայ, որպես հայոց պետականության ամրապնդման և հարատև խաղաղության հաստատման մարտիկների:

Երեխաների բարոյական և հայրենասիրական դաստիարակության պարագայում շատ մեծ դեր ունի ծնողների հետ սերտ հարաբերությունները: Սեփական ընտանիքի պատմությունը շոշափելը, երեխայի մոտ ուժեղ հույզեր է առաջացնում և ստիպում է կարեկցել, ուշադիր լինել անցյալի հիշողության, պատմական արմատների նկատմամբ:

Ինչպես ասել են Յու. Ամիրջանյանը, Ա. Սահակյանը «Ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքներ, նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հարենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթի, սովորությունների նկատմամբ: Անկախ տարիքից հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի իրենց գյուղի, ավանի, քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ: Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ:»[3]

[3] Յու. Ամիրջանյանը, Ա. Սահակյանը, «Մանկավարժություն» ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005, էջ 348

Դասի նմուշ օրինակ

Ամիս, Ամսաթիվ 15.11.2023

Առարկան՝ Խոսքի զարգացում

Տարիքային խումբը՝ Խառը խումբ

Դասի թեման՝ «Հայաստան իմ հայրենիք»

Անհրաժեշտ պարագաները՝ ՀՀ-ի քարտեզ, դրոշ, զինանշան, գունավոր թղթեր, սոսինձ, գունավոր մատիտներ, մկրատ, սրիչ, ռետին տեսանյութ, ջրաներկ, վրձիններ, թաց անձեռոցիկ։

Դասի ընթացքը

Դաստիարակ

Կարդում է *Իմ անունը Հայաստանը է,*

Ես ընկերն եմ դարերի

Իմ անունը Հայաստան է,

Տունն եմ հայեր։

Դաստիարակ

- Երեխանե՛ր, ինչի՞ մասին է բանաստեղծությունը։
- Ինչո՞ւ է ասում «Տունն եմ հայերի»
- Ի՞նչ եք հասկանում Հայաստան ասելով։
- Ո՞րն է մեր հայրենիքը։
- Ի՞նչ եք հասկանում ընտանիք ասելով։

Ֆիզկուլտ դադար

Ցույց ենք տալիս զինանշանը և հարցնում.

- Ի՞նչ է սա երեխաներ։
- Ինչե՞ր ենք տեսնում զինանշանի վրա։
- Ի՞նչ են խորհրդանշում առյուծն ու արծիվը։

Երեխաները տալիս են տարբեր պատասխաներ։

Դասաստիարակ

Պաստառի վրա տեսնում ենք մեր երկրի զինանշանը՝ վեհ ու շքեղ, ուժի աշխատանքի խորհրդանիշ, նոյան տապանը, առյուծ, արծիվ, արքայական տոհմեր, սուր ու փետուր։ Հայաստանը մեր բնօրրանն է, մեր բոլորի մեծ տունը, մենք պարտավոր ենք պահել ու պաշտպանել մեր հայրենիքը, ինչպես մեր ծնողներն են մեզ սիրում ու հոգ տանում։

Ցույց ենք տալիս դրոշը և հարցնում.

- Թե ո՞վ գիտի ինչ է սա։
- Քանի՞ գույն ենք տեսնում։
- Ի՞նչ գույներ ենք տեսնում։

Երեխաներ

Ակտիվ պատասխանեցին հարցերին։

Դաստիարակ

Իսկ այժմ սովորենք, թե ինչ են խորհրդանշում դրոշի յուրաքանչյուր գույնը։

Կարմիրը խորհրդանշում է հայ ժողովրդի մշտական պայքարը՝ քրիստոնեության, հավատքի, ազատության համար։

Կապույտը խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամքը՝ խաղաղ երկնքի ներքո։

Նարնջագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի տաղանդը, արարչականը և աշխատասիրությունը։

Բաժանում ենք տարիքային խմբերի, կրտսեր խումբը կնկարի դրոշը, միջին խումբը՝ գունավոր թղթերով, պատրաստի այն, իսկ ավագ խումբը ջրաներկով կնկարի։

Երեխաները ստացան անհրաժեշտ նյութերը և տրվեց ժամանակ աշխատանքը կատարելու համա։ Ավարտելուց հետո աշխատանքները փակցվեցին գրատախտակին և գովեստի խոսքերով խրախուսվեցին աշխատանքները, իսկ լավագույնները խրախուսվեցին ինքնակպչուն աստղիկներով։

Իսկ վերջում հեռուստացույցով միացնում ենք Ինգա և Անուշ Արշակյանների «ԻՄ անունը Հայաստան է » երգը, երեխաներն էլ ձեռք ձեռքի տված երգում են ու պարում են։

Տնօրենի դիտարկումները։

Սաների հայրենաճանաչության ամրապնդման գործում մեծ դեր ունի ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացը, որի նպատակով մեծ աշխատանքներ են տարվել դաստիարակի կողմից։ Այս պարապմունքը մեծ հնարավորություն տվեց երեխաների մեջ ձևավորել պատկերացումներ հայրենասիրության մասին։ Դաստիարակը հասավ իր նպատակին, երեխաները ակտիվ մասնակցում էին պարապմունքին, փոքր-ինչ թերանում էին կրտսեր խմբի սաները, իսկ ավագ ու միջին խմբերի սաները հեշտությամբ պատասխանում էին բոլոր հարցերին։

Եզրակացություն

Այսպիսով եկանք այն եզրահանգման, որ հայրենաճանաչության դաստիարակությունը շատ կարևոր, բայց և բարդ գործընթաց է: Որպեսզի երեխան լավ ճանաչի Հաաստանի բոլոր վայրերը, պետք է հնարավորություն տանք երեխաներին իրենց սեփական աչքերով տեսնել Հայաստանի տեսարժան վայրերը, ինչն էլ ի հերթին կնպաստի հայրենիքի նկատմամբ սիրո ձևավորմանը:

Սյունիքի մարզը հայտնի է իր տեսարժան ու մշակույթային վայրերով, օրինակ՝ Տաթևի վանքը, Խնձորեսկի ճոճվող կամուրջը, Տաթևեր ճոպանուղին, Սատանայի կամուրջը: Երեխաները, գոնե, իրենց բնակավայրի գեղեցիկ ու սեսարժան վայրեր այցելեն, պարապմունքներ անցկացնեն բնության գրկում, ծանոթանան իրենց բնակավայրին, տեսնեն բնության հրաշքները: Ավելի լավ է մի անգամ տեսնել, քան հազար անգամ լսել: Մեր գեղատեսիլ, կախարդական վայրերն այցելությունները ավելի կխորացնեն հայրենիքի հանդեպ սերը:

Երեխան առաջին և ամենակարևոր հայրենասիրական ու հայրենաճանաչության դաստիարակությունը ստանում է ընտանիքում:

Շատ կարևոր տեղ ունի հայրենաճանաչության մեջ այցելությունները:

Առաջարկություններ

Կցանկանայի ուշադրություն դարձնեն այն հանգամանքին, որ երեխաներին ավելի շատ տանեն շրջագայությունների Հայաստանի գեղատեսիլ վայրերով: Ծանոթացնեն մեր մշակույթին, պատմությանը, կենցաղին, վարք ու բարքին, ավանդույթներին:

Օգտագործված գրականության ցանկ

1. https://bararanonline.com/%D5%B0%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5%D5%B6%D5%AB%D6%84
2. Յու. Ամիրջանյանը, Ա. Սահակյանը, «Մանկավարժություն» ուսումնական ձեռնարկ Երևան, 2005,
3. Յու Սահակյան, Ա. Ամիրջանյան «Մանկավարժություն» Երևան, 2004,
4. https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D6%80%D5%A5%D5%B6%D5%A1%D5%BD%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6